

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

30 օգոստոսի, 2022 թ.

N 22 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կանոնադրության 14.16.3 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության կարգը՝ համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո և գործում է 2022թ. սեպտեմբերի 1-ից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022 թ. օգոստոսի 30-ի N 22 - Լ որոշման

ԿԱՐԳ

Պալատի որակավորման ծրագրի և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կարգը կարգավորում է Պալատի որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսների և այլ անձանց վարձատրության չափը:

1.2 Պալատի որակավորման ծրագրի առարկաների և շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների մասնակիցների քանակը և լսարանային հնարավորությունները սահմանում է Պալատի գործադիր տնօրենը:

2. Պալատի որակավորման ծրագրի առարկաների դասընթացների վարձատրություն

2.1 Պալատի որակավորման ծրագրի առարկաների դասախոսները վարձատրվում են ամբողջական դրույքով դասընթացի մինչև 20 մասնակցի դեպքում: Որակավորման ծրագրի 1-3 առարկաների ամբողջական դրույքը կազմում է 280,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 310,000 դրամ: 20-ից ավել մասնակցի դեպքում դասախոսների վարձատրության ամբողջական դրույքը ավելանում է յուրաքանչյուր մասնակցի համար՝ 15,000 դրամով:

2.2 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ կազմողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների համար կազմում է 200,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 230,000 դրամ:

2.3 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ վերանայողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների համար կազմում է 55,000 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 65,000 դրամ:

2.4 Պալատի որակավորման ծրագրի առարկաների քննաթերթ ստուգողների և քննության արդյունքների վերանայողների վարձատրությունը որակավորման ծրագրի 1-3 առարկաների յուրաքանչյուր քննաթերթի համար կազմում է 3,500 դրամ, և 4-7 առարկաների համար՝ 4,500 դրամ:

3. Պալատի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների վարձատրություն

3.1 Պալատի շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների դասախոսները վարձատրվում են 1 ժամը 20,000 ՀՀ դրամով դասընթացի մինչև 20 մասնակցի դեպքում: 20-ից ավել մասնակցի դեպքում դասախոսների վարձատրության 1 ժամը ավելանում է յուրաքանչյուր մասնակցի համար՝ 1,000 դրամով: